



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

9 ֆեբրվարի 2015 թ. № 11 - Ա/1

ք. Երևան

«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ՀԱՄԱՅԱՆՑԱՅԻՆ ԱՌՅԱՆՑ (ՕՆԼԱՅՆ) ՌԵԺԻՄՈՎ ՆԵՐԿԱՅԱԾՄԱՆ ԵՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐՆ ՈՒ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) № 1 հավելվածի № 1 աղյուսակի 08 բաժնի 04 խմբի 01 դասի «01. Երիտասարդական ծրագրեր» ծրագրի՝ հրամայում եմ՝

1. Հաստատել «Հասարակական կազմակերպությունների կողմից դրամաշնորհային ծրագրերի հայտերի համացանցային առցանց (օնլայն) ռեժիմով ներկայացման և մրցութային ընտրության համակարգի պահպանում և զարգացում» ծրագիրը՝ համաձայն № 1 հավելվածի:

2. Հաստատել «Հասարակական կազմակերպությունների կողմից դրամաշնորհային ծրագրերի հայտերի համացանցային առցանց (օնլայն) ռեժիմով ներկայացման և մրցութային ընտրության համակարգի պահպանում և զարգացում» ծրագրի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն № 2 հավելվածի:

3. Օրենքի № 1 հավելվածի № 16 աղյուսակի «Հասարակական կազմակերպությունների կողմից դրամաշնորհային ծրագրերի հայտերի համացանցային առցանց (օնլայն) ռեժիմով ներկայացման և մրցութային ընտրության համակարգի պահպանում և զարգացում» տողով նախատեսված միջոցներից սույն հրամանի 1-ին կետի կատարումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության համակարգի «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 4000000 (չորս միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն № 2 հավելվածի:



Գ. ՂԱԶԱՐՅԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ՀԱՄԱՅԱՆՑԱՅԻՆ ԱՌՏԱՆՑ (ՕՆԼԱՅՆ) ՌԵԺԻՄՈՎ
ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՅՈՒՄ»

I. Ծրագրի հիմնավորումը

1. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության պետական երիտասարդական քաղաքականության շրջանակներում գործող առցանց դրամաշնորհային համակարգը (www.cragrer.am) ներդրվել է 2010 թվականի հուլիսի 1-ից՝ Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի 2010 թվականի հունիսի 19-ի № 6 որոշման համաձայն: Համակարգի ներդրումը ապահովեց դրամաշնորհային ծրագրերի ներկայացման, գնահատման և ընտրության գործընթացների թափանցիկությունը: Ներկայումս համակարգում գրանցված են 347 հասարակական կազմակերպություն և 47 փորձագետ:

II. Նպատակը

2. Ծրագրի նպատակն է ապահովել համակարգի անխափան աշխատանքը, ինչպես նաև հաշվի առնելով 2012-2014 թվականների գործարկման ընթացքում առաջացած խնդիրները և համակարգից օգտվող շահառուների կողմից կատարված առաջարկները՝ կատարելագործել այն՝ դարձնելով առավել մատչելի և կիրառելի:

III. Արդյունքները

3. Երիտասարդական կամ երիտասարդության ոլորտում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների գործունեության խթանում:

IV. Ծրագրի իրականացման տեխնիկական բնութագիրը

Աշխատանքի անվանումը	Նկարագրությունը
<p>Ստեղծագործական աշխատանք</p>	<p>Ադմինիստրատիվ և գործառնությունների ինտերֆեյսի բարելավման աշխատանքների ծրագրում և իրագործում:</p> <p>Համակարգի միջոցով դիմած հասարակական կազմակերպությունների և ծրագրերի վիճակագրության վարում:</p> <p>Դրամաշնորհային հայտարարությունների տեղադրում, ծրագրերի ընդունման անխափան աշխատանքի ապահովում, փորձագիտական գնահատման վիճակագրության կազմում:</p> <p>Դիմած ու գնահատված ծրագրերի և կատարված փորձագիտությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ապահովում:</p>
<p>Տեխնիկական աշխատանքներ</p>	<p>Համակարգում տվյալների որոնման, ֆիլտրացիայի և դուրսբերման գործիքների լրամշակում և բարելավում:</p> <p>Գրանցման դիմումի և գնահատման ձևերում ուղղորդումների և հուշումների համակարգի կիրարկում:</p> <p>Գրանցման, դիմումի և գնահատման ձևերում փոփոխությունների կատարում՝ ըստ նախորդ փուլի արձագանքների և առաջացած խնդիրների:</p> <p>Նախորդ թեստային փուլին մասնակցած գործառնությունների (դիմող կազմակերպություններ, փորձագետներ, ադմինիստրատորներ) հետ համատեղ բացահայտված թերացումների համակարգում, լուծումների մշակում և տեխնիկական կատարում, դոմեյնի, հոստինգի սպասարկում հետևյալ նվազագույն պարամետրերով՝ 7Gb, SQL DB 10, Subdomain 10, փոստարկղեր 150:</p>

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Մ. ԱՆԱՆՅԱՆ

ՆԱԽԱՀԱՇԻՎ
 «ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ
 ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԱՌՑԱՆՑ (ՕՆԼԱՅՆ) ՌԵԺԻՄՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
 ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՅՈՒՄ»
 ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐԻ

№	Հոդվածը (հակիրճ նկարագրություն)	ՀՀ բյուջեից պահանջվող գումարը (ՀՀ դրամ)	Միավորի արժեքի հիմնավորումը
1	<p>Ադմինիստրատիվ և գործաձողների ինտերֆեյսի բարելավման աշխատանքների ծրագրում և իրագործում:</p> <p>Համակարգի միջոցով դիմած հասարակական կազմակերպությունների և ծրագրերի վիճակագրության վարում:</p> <p>Դրամաշնորհային հայտարարությունների տեղադրում, ծրագրերի ընդունման անխափան աշխատանքի ապահովում, փորձագիտական գնահատման վիճակագրության կազմում:</p> <p>Դիմած ու գնահատված ծրագրերի և կատարված փորձագիտությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ապահովում:</p> <p>Համակարգում տվյալների որոնման, ֆիլտրացիայի և դուբլերման գործիքների լրամշակում և բարելավում:</p> <p>Գրանցման դիմումի և գնահատման ձևերում ուղղորդումների և հուշումների համակարգի կիրարկում:</p> <p>Գրանցման, դիմումի և գնահատման ձևերում փոփոխությունների կատարում՝ ըստ նախորդ փուլի արձագանքների և առաջացած խնդիրների:</p> <p>Նախորդ թեստային փուլին մասնակցած գործաձողների (դիմող կազմակերպություններ, փորձագետներ, ադմինիստրատորներ) հետ համատեղ բացահայտված թերացումների համակարգում, լուծումների մշակում և տեխնիկական կատարում, դոմեյնի, հոստինգի սպասարկում հետևյալ նվազագույն պարամետրերով՝ 7Gb, SQL DB 10, Subdomain 10, փոստարկղեր 150:</p>	4000000	Հարցում 1
ԸՆԴԱՄԵՆԸ		4000000	

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Մ. ԱՆԱՆՅԱՆ

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ
(2015թվականի համար)

«Հատարակական կազմակերպությունների կողմից դրամաշնորհային ծրագրերի հայտերի համացանցային առցանց (օնլայն) ռեժիմով ներկայացման և մրցութային ընտրության համակարգի պահպանում և զարգացում» ծրագրի աշխատանքների կատարում, այդ թվում՝ ադմինիստրատիվ և գործածողների ինտերֆեյսի բարելավման աշխատանքների ծրագրում և իրագործում, համակարգի միջոցով դիմած հասարակական կազմակերպությունների և ծրագրերի վիճակագրության վարում, դրամաշնորհային հայտարարությունների տեղադրում, ծրագրերի ընդունման անխափան աշխատանքի ապահովում, փորձագիտական գնահատման վիճակագրության կազմում, դիմած ու գնահատված ծրագրերի և կատարված փորձագիտությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ապահովում, համակարգում տվյալների որոնման, ֆիլտրացիայի և դուրսբերման գործիքների լրամշակում և բարելավում, գրանցման դիմումի և գնահատման ձևերում ուղղորդումների և հուշումների համակարգի կիրարկում, գրանցման, դիմումի և գնահատման ձևերում փոփոխությունների կատարում՝ ըստ նախորդ փուլի արձագանքների և առաջացած խնդիրների, նախորդ թեստային փուլին մասնակցած գործածողների (դիմող կազմակերպություններ, փորձագետներ, ադմինիստրատորներ) հետ համատեղ բացահայտված թերացումների համակարգում, լուծումների մշակում և տեխնիկական կատարում, դոմեյնի, հոստինգի սպասարկում հետևյալ նվազագույն պարամետրերով՝ 7Gb, SQL DB 10, Subdomain 10, փոստարկղեր 150:

Գինը՝ 4 000 000 (Չորս միլիոն) ՀՀ դրամ

